«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա ՝ *Սաների գեղագիտական զարագացման գործում «Տիկնիկային թատրոնի » դերը և նշանակությունը*

Հաստատություն ՝ *Երևանի հ. 161 մանկապարտեզ*

Դաստիարակ ՝ Լիլթ Տախվերդյան

Ղեկավար՝ Ժաննա Ավետիսյան

2023թ.

Բովանդակություն

1 Բովանադակություն.....1

2 Ներածություն.....2

3 Սաների գեղագիտական զարագացման գործում Տիկնիկային թատրոն դերը և նշանակությունը.....5

4 Գլուխ 2 Տիկնիկային թատրոնի դերը գեղարվեստական ստեղծագործության մեջ.....12

5 Եզրակածություն.....15

6 Գրականության ցանկ.....16

Ներածություն

Անձի գեղագիտական որակների հիմքերը դրվում են վաղ տարիքում, սակայն դրանք կազմավորվում և պահպանվում են ամբողջ կյանքի ընթացքում: Անձի զարգացումը և նրա գեղագիտական մշակույթի ձևավորումը կարևորագույն խնդիրներ են, որոնք մշտապես հետաքրքրել և ուսումնասիրվել են տարբեր ժամանակների մանկավարժների ու հոգեբանների կողմից: Դ.Ա. Լեոնտևի, Բ.Տ Լիխաչովի, Ա. Մելիք Փաշաևի, Ն.Ն.Նեմենսկու, Ե.Մ. Տորոշիլովայի, Վ.Ն. Շացկայի կարծիքով՝ գեղագիտական դաստիարակությունը նախադպրոցականի անձնային որակների կայացման և տվյալ բնագավառի՝ մանկավարժների դաստիարակչական աշխատանքի կազմակերպման հիմքն է: 2,5 – 6,5 տարեկան շրջանում՝ երեխայի զարգացմանը զուգընթաց նրա կյանքում տեղի են ունենում մի շարք փոփոխություններ:

Մանկության շրջանում խաղը մեծ նշանակություն ունի երեխայի անհատականության ձևավորման համար:Այն ինքնաճանաչման ու ինքնագնահատման ասպարեզ է և ապահովում է ազատություն, իրերին և գործողություններին տիրապետելու զգացում, ինչպես նաև հող է նախապատրաստում երեխաների հասարակական փոխհարաբերությունների զարգացման համար: Խաղը զարգացնում է երևակայելու, գործողություններն ու զգացմունքները կամովին կարգավորելու ունակություններ, տալիս է փոխգործակցության և փոխըմբռնման փորձ:

Խաղը, որպես ինքնաճանաչման գործուն միջոց, պետք է զերծ լինի մեծերի կողմից պարտադրված թեմատիկայից և գործողությունների կանոնակարգումից: Երեխան պետք է հնարավորություն ունենա տիրապետելու խաղի ավելի ու ավելի բարդ «լեզվին», դրա իրացման ընդհանուր եղանակներին (պայմանական գործողություններ, դերային փոխգործողություն, թեմայի ստեղծագործական կառուցում և այլն), որոնք նպաստում են սեփական մտահղացումների ստեղծագործական իրացման ազատությանը:Խաղը պետք է կազմակերպվի որպես երեխաների ու դաստիարակի համատեղ գործունեություն, ուր մեծը հանդես է գալիս խաղընկերոջ դերում և խաղի առանձնահատուկ «լեզու» կրող, նպաստում է խաղը հասկանալուն ու ազատ և անբռնազբոս մթնոլորտ ստեղծելուն: Երեխայի համար լավ կապակցված խոսքը հաջող գրագիտության և զարգացման բանալին է: Գեղարվեստական ընթերցանության վերաբերյալ զրույցները անհրաժեշտություն են

նախադպրոցականների առօրյայում: Դրանք երեխային օգնում են տրամաբանելու, գեղագիտորեն ընկալելու գրական ստեղծագործության իմաստը:Նախադպրոցական տարիքի երեխաների կապակցված խոսքի մշակումը երկխոսության և մենախոսության միջոցով նրա խոսքային և հաղորդակցական հմտությունների զարգացման կարևոր նախապայման է: Նախադպրացականի կապակցված խոսքի զարգացումը տեղի է ունենում աստիճանաբար, մտածողության զարգացմանը համընթաց:Դժվար է գերագնահատել խոսքի և հաղորդակցական կարողությունների զարգացման դերը հատկապես նախադպրոցական տարիքում: Խոսքը երեխայի սոցիալականացման ամենակարևոր գործոնն է, նրա հետագա ուսումնական և կենսական հաջողությունների հիմքը:Տարիքային բոլոր փուլերում խաղը պետք է պահպանվի որպես երեխայի ազատ, ինքնուրույն գործունեություն, որի ընթացքում երեխաներն ազատորեն միավորվում են և փոխգործակցում են միմյանց հետ, ուր ձևավորվում է մեծերից անկախ մանկական աշխարհը:Հաղորդակցության՝ երկխոսության կարողությունների ձևավորման կարևոր գործոններից են խաղերը և հատկապես դերերով խաղերը, որոնք նպաստում են երեխաների ուսումնառության դրդապատճառների, ինչպես նաև ուսումնասիրվող լեզվի նկատմամբ հետաքրքրության առաջացմանը: Ինչպես նշում է Դ. Էլկոնինը. «Խաղի կիրառումը պարապմունքի ժամանակ արդյունավետ է, երբ այն ընկալվում է որպես ոչ միայն խաղ, այլև ՝ պարապմունք խաղի ձևով: Խաղային մեթոդը նոր հնարավորություններ է ընձեռում երեխաների գործունեության կազմակերպման համար» Թատրոնը երեխայի առօրյային միախառնված մեծ խաղ է: Բեմում ներկայացվող հեքիաթն ավելի մոտ, հասանելի ու մատչելի է, քան նրա համար ընթերցվող գիրքը, քանի որ թատրոնը փոքրիկ հանդիսատեսին առաջարկում է լսողական և տեսողական պատկերներ: Համադրական արվեստի այս տեսակը միջառարկայական կապերի, երեխաների բազմակողմանի ու ներդաշնակ զարգացման լայն հնարավորություն է ընձեռում: Այն ձևավորում է երգելու, ասմունքելու, պարելու, նմանակելու և հորինելու հմտություններ, մշակում խոսքի կուլտուրա, տեխնիկական միջոցներ օգտագործելու կարողություն: Մանկական թատերական արվեստի տեսակներից հատկապես սեղանային թատրոնի կազմակերպման առանձնահատկություններին է անդրադարձել սույն հոդվածի հեղինակը:

Հետազոտության նպատակն է նախադպրոցական տարիքի երեխաների մեջ երևակայության հուզական ոլորտի խթանման միջոցով օգտագործելով տիկնիկային թատրոնից նաև մատնային թատրոն: Զագացնելով մանր մոտորիկան, որն էլ իր

հերթին նպաստում է խոսքի զարգացմանը: Ընտրելով «Սաների գեղագիտական

զարագացման գործում Տիկնիկային թատրոն դերը և նշանակությունը» փորձ ենք արել կարևորել երեխայի զարգացման այս ոլորտը և ցույց տալ, թե ինչպես կարելի է գրական ստեղծագործությունների և դրանց խաղարկման միջոցով զարգացնել երեխայի մտածողությունն ու խոսքը:

Հետազոտաան աշխատանքը կառուցված է ներածությունից, երկու գլխից, եզրակացություններից և նկարներից: Զարգացնել դերային խաղերի միջոցով համագործակցային կարողություններ և հմտություններ: Խթանել , զարգացնել երեխաների պարզ իրադրություններում 2-3 նախադասությամբ տեղեկություն ստանալու և հաղորդելու զրույցին մասնակցելու կարողություններ՝ հնարավորություն տալ նրանց մտնել երևակայական իրադրության մեջ և խաղալ իրենց և այլոց դերերը:

Գլուխ 1

Սաների գեղագիտական զարագացման գործում Տիկնիկային թատրոն դերը և նշանակությունը

...Երեխաները անպատրաստից պիեսներ են հորինում, անհրաժեշտ նվազագույն բեմական միջոցներն իրենց ձեռքով են պատրաստում, հանդես են գալիս որպես դերասաններ՝ տրված թեմայով իմպրովիզացիա անում և հանդիսատեսներին ներկայացման մեջ ներգրավում: Եվ այս ամենը՝ «անկրկնելիության» նշանի տակ. այստեղ թատրոնը «կյանքի պահ» է, ոչ թե «ապրածի վերարտադրություն»: Անձամբ ինձ համար «թատրոնխաղ-կյանք» սկզբունքը շատ ընդունելի է: Դա հորինող երեխային կօգներ ընդլայնելու իր մտահորիզոնը: Առաջին իմպրովիզացիաներից հետո, որպեսզի չսառչի, խաղը պետք է ինչ-որ բանով հագեցնել, հարստացնել: Ազատությունը «տեխնիկայի» աջակցության կարիքն ունի:

Ջ. Ռոդարի

Թատրոնը երեխայի կյանքին՝ միախառնված մեծ խաղ է: Բեմում ներկայացվող հեքիաթն ավելի մոտ է, հասանելի և մատչելի, քան կարդացած գիրքը: Բանն այն է, որ թատրոնը փոքրիկ հանդիսատեսին առաջարկում է լսողական և տեսողական պատկերներ: Ազդեցության առումով այն չունի իր հավասարը: Թատրոնը միակն է, որ պահպանում և մշակում է ժողովրդական իմաստնությունը՝ առանց ազգային պատկանելության: Իր միջնորդավորված ձևի մեջ այն մեզ նորից ու նորից սովորեցնում է լինել ազնիվ ու բարի, նպատակասլաց և աշխատասեր, կարողունակ՝ իրապես գնահատելու և սիրելու բառի հարստությունը, ճանաչելու դրա բոլոր գույներն ու երանգները, հասկանալու հեղինակի ստեղծա- գործական ուրախությունը և հպարտության զգացումը:

Թատերական արվեստն ինքնին միջառարկայական կապերի, երեխաների

բազմակողմանի ու ներդաշնակ զարգացման նպատակի գործնական իրակա նացման առումով ընձեռում է լայն հնարավորություն: Ի վերջո, թատրոնը հա-

մադրական արվեստ է: Այն ձևավորում է և՛ երգելու, և՛ ասմունքելու, և՛ պարելու և հորինելու, և՛ նմանակելու, մշակում խոսքի կալտուրա, տեխնիկական միջոցներ օգտագործելու կարողություն: Բեմականացումներին մասնակցելը հաճախ վերացնում է նաև երեխայի արտասանական կամ այլ բնույթի թերությունները: Թատրոնի միջոցով ենթատեքստի ընկալումն ու մեկնաբանումը վերածվում են նույնիսկ ազատ, սահուն, արտահայտիչ ընթերցելու կայուն որակների:Դերակատարումը նպաստում է երեխաների ինքնաբացահայտմանը և ձևավորում համերաշխ կոլեկտիվ: Թատրոնը և՛ երեխաների, և նրանց ծնողների համար վերածվում է այնպիսի մի հաճելի վայրի, ուր փոխադարձ հաղորդակցումն ստանում է առանձնակի հրապույր ու վառ տոնականություն: Յուրաքանչյուր երեխա-դերակատար (անգամ մելանխոլիկը) իրեն զգում է իբրև կարևոր և գնահատված անձ, որն ուշադրության կենտրոնում է:

Ըստ Ջ. Դյուիի՝ դերաբաժանումը կարևոր սոցիալական նշանակություն ունի. այն սովորաբար ինքնաբերաբար է կատարվում (ի տարբերություն ներկայացմանը պատրաստվելուն): Այդ ընթացքում երեխան գնահատում և յուրացնում է հասարակության մեջ ընդունված սոցիալական դերերն ու հարաբերությունները և վերարտադրում դրանք: Առաջին հայացքից թվում է, թե նա ընդամենը պասիվ ընդօրինակող է: Իրականում նա նոր տարրեր է ներմուծում, այլ կերպ է մեկնաբանում իրավիճակն ու հարաբերությունները, նոր երանգ է ներմուծում սովորական առօրյան վերարտադրող իրավիճակի մեջ՝ ելնելով իր կենսափորձից և աշխարհընկալումից: Նրա համար այդ խաղը ոչ թե նմանակում է, այլ կյանքի պահ այդ պահին նա ա՛յդ կյանքով է ապրում: Թատրոնն ունի նաև բուժիչ հատկություն: Այսօր տիկնիկային թատրոնը , որպես հոգեթերապիայի մեթոդ , օգտագործվում է շատ երկրներում: Տարբեր դիմակների, դերերի կրումը բարենպաստ ազդեցություն է ունենում մանկական հոգեբանության վրա: Այսօր մանկական թատրոնը բազմազան է ՝ տիկնիկային թատրոն,սեղանային, ֆլանելային, ստվերային, թատրոն ափսեների վրա և այլն: Վերջիններս կարող են կազմակերպված լինել և՛ որպես բեմականացում, և՛ որպես խաղային ու իրական բովանդակություն ունեցող գործնական իրավիճակ: Երեխաները հաճույքով ձեռնամուխ են լինում խնդրի լուծմանը: Նման խաղային իրավիճակները երեխաներին մղում են խնդրի ճիշտ լուծման որոնումների: Երեխաների կողմից վերապրած հույզերը, իրական խաղային և պայմանական իրավիճակները, որոնք առաջանում են դաստիարակի նախաձեռնությամբ կամ տարերայնորեն , հարստացնում են նախադպրոցականի հուզաշխարհը, բացում նոր

հնարավորություններ ինքնաարտահայտման և համագործակցության համար:

ԴԵՐԱՅԻՆ ԽԱՂ Մասնակից լինելով սեփական ուսումնառության պլանավորման, 8 իրականացման և վերլուծության գործընթացին՝ սովորողը նպատակային սովորում է սովորել: Դերային խաղը գործնական աշխատանքի այն տեսակն է, որը լայնորեն տալիս է այդ հնարավորությունը: Դերային խաղին պետք է վերաբերվել ոչ թե որպես ժամանցի, այլ գործնական բազմափուլ աշխատանքի, որի յուրաքանչյուր փուլ ունի կոնկրետ նպատակներ: Հետևաբար պետք է հանգամանորեն պլանավորել դերախաղը' նախապես սահմանելով նպատակ և վերջնարդյունք: Դերախաղերը սովորաբար իրականացվում են 3 փուլով. .նախապատրաստական փուլ .խաղի փուլ .անդրադարձի փուլ Առաջին փուլում քննարկվում են այն կանոնները, որոնք մասնակիցները պետք է պահպանեն: Բաժանվում են դերերը: Դերասանները կարդում են և մտածում իրենց դերի մասին: Երկրորդ փուլում խաղացողները արտահայտում են իրենց զգացմունքները: Ցանկացած դերասանի համար կան կանոններ, որոնց պահպանումը արդյունավետ աշխատելու և լավագույն արդյունքի հասնելու հնարավորություն կտա: Դասարանում դերային խաղերի օգտագործումը նպաստում է փորձի ձեռքբերմանը: Դրանք կարող են նաև լինել հանպատրաստից,

նախապես չմշակված: Դերային խաղի նպատակն է. 1.Զարգացնել սովորողի իմացական գործընթացները (մտածողություն,երևակայություն,ուշադրությո ւն) և հուզակամային ոլորտը (հույզեր,զգացմունքներ), ստեղծարարությունը: 92.Զարգացնել սովորողի հնարավորությունը տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակությունը, աշխատասիրությունը, հետևողականությունը: 3.Ձևավորել իր և իր ընկերների գործունեությունը գնահատելու կարողությունը: Զարգացնել անհատական խմբային աշխատելու կարողությունը: Միմյանց հարգելու և փոխօգնության ցուցաբերելու պատրաստակամությունը: Ուսուցիչը պետք է խրախուսի դերային խաղերը դասարանում՝ զարգացնելով օտար լեզվով հաղորդակցվելու հմտությունները, կարողությունները, բանավոր խոսքը : Սովորողը պետք է լինի սեփական կրթության դերակատարը:

Մանկական թատրոնում հանդիսատեսը նույնքան կարևոր անձ է, որքան դերակատարը: Երեխաների մի խումբ ընկերների համար խաղում է, մյուս խումքը՝ հանդիսատես դառնում: Վերջինս աստիճանաբար, աննկատ ներգրավվում է խաղի մեջ և իր վերաբերմունքով ու միջամտություններով ազդում բեմադրության ընթացքի վրա: Դաստիարակվում է կիրթ, դիտարկող, մտածող հանդիսատես, որը կարողանում է գնահատել, վերաբերմունք արտահայտել, հետևու թյուններ անել, ներկայացման մասնակիցը դառնալ: Հետո դերերը փոխվում են:Միշտ կարելի է հանպատրաստից բեմ սարքել և «թատրոն-թատրոն» խաղալ:19-րդ դարի կեսերին ռուսական մանկավարժական միտքն սկսեց ավելի շատ ուշադրություն դարձնել մանկական դաստիարակության հարցերին: Այս ամենը չէր կարող չազդել մանկական թատրոնի վրա: Մեծահասակները դրան վերաբերվում էին ոչ միայն որպես հստակ նախասիրության, օգտակար խաղի, այլև դաստիարակության մեթոդի, երեխայի ստեղծագործական ունակությունևե րի զարգացման, մշակութային ճաշակի, բարոյական սկզբունքների ձևավորման կարևոր միջոցի: Վիրաբույժ Ն. Պիրոգովը կարծում էր, որ մանկական թատրոնը հիանալի միջոց է՝ երեխայի մտքի, սրտի և ճաշակի վրա ազդելու համար: Այսօր մանկական թատրոնը բազմազան է՝ տիկնիկային թատրոն, սեղանային, ֆլանելային, մատնային, ստվերային, թատրոն՝ ձեռքերի վրա, թատրոն ափանների վրա, խաղեր՝ թատերական պաստառներով, մնջախաղ, խաղ-ներ կայացումներ և խաղային իրավիճակներ: Վերջիններս կարող են կազմակերպված լինել և որպես բեմականացում, և որպես խաղային ու իրական բովանդա կություն ունեցող գործնական իրավիճակներ: Հաջողությունը պայմանավորված է այն հանգամանքով,

թե ինչքանով է բովանդակությունը համընկնում երե խաների փորձի և նրանց կյանքի տպավորությունների հետ: Երեխաները հաճայքով ձեռնամուխ են լինում խնդրի լուծմանը: Նրանք ոչ միայն քննարկում են,այլև գործնականորեն իրականացնում անհրաժեշտ գործողություններ: Նման խաղային իրավիճակները երեխաներին մղում են որոնելու խնդրի լուծման ճիշտ ուղիներ:Այս նպատակով խաղային կերպարները նրանց դիմում են հարցերով, մտնում վեճի մեջ, նրանց խորհուրդների ճշմարտացիության վերաբերյալ կար կածներ հայտնում, խնդրում ցույց տալ, թե ինչպիսի գործողություններ են ձեռնարկելու, ի՞նչ բառեր են ասել, որպեսզի լուծեն խնդիրը:Արդեն ունեցած պատկերացումները երեխաներին կօգնեն ճիշտ լուծել նոր խնդիրը: Երեխաների կողմից վերապրված հույզերը, իրական խաղային և պայմանական իրավիճակները, որոնք ստեղծվում են դաստիարակի նախաձեռնությամբ կամ տարերայնորեն, հարստացնում են նախադպրոցականների հուզաշխարհը, բացում նոր հնարավորություններ՝ նրանց ինքնարտահայտման և համագործակսարյան համար:

Որպեսզի երեխայի մեջ առաջանա «թատրոն» խաղալու պահանջ և ցանկություն, նախ դրա համար հարկավոր է ստեղծել հատուկ պայմաններ: Զարգացնող միջավայրը՝ սկզբնաղբյուր է թատերական խաղի համար:

Մինչև 3 տարեկանը այն տարիքն է , երբ երեխան ծանոթանում է իր շրջապատին, փորձում է համը , նրա համար գրավիչ են գույները, շոշափում է , նայում է: Այս տարիքում խաղը դեռ չի սկսվել: Սկսած 3 տարեկանից սկսվում է խաղը: Երեխաները սկսում են ակտիվ ուսումնասիրել խաղալիքները՝ մեքենա քշել, տիկնիկին կերակրել, լողացնել, խորանարդիկներով կառուցել, ապուր եփել, և այլն:Սկսում է ակտիվ գործել երեխայի երևակայությունը: Նա դառնում է իր փոքրիկ ներկայացումների ռեժիսորը, նմանակում տարբեր կերպարների: Խաղալիքները կարող են դառնալ իր հեքիաթի հերոսները: Եթե երեխան անմիջապես չի մասնակցում խաղին , դա հոք չէ, նա առայժմ ուսումնասիրում է և շուտով ինքը կլինի նախաձեռնող և կխաղա իր հորինած սցենարը:Այստեղ դաստիարակի դերը անփոփոխ է:Երեխաները հաճույքով են խաղում մեծերի հետ: Մի որոշ ժամանակ անց նրանք իրենք են դառնում նախաձեռնող և խաղի մեջ մասնակից են դարձնում իրենց ընկերներին:4-5 տարեկանում սկսվում է դերասանական խաղը: Կերպարներ խաղալը երեխաների սիրած զբաղմունքն է: Խաղի ընթացքում երեխան սովորում է ինքն իրեն վերահսկել: Նրանք սիրում են խաղալ կենդանիների կերպարներ,

հեքիաթի հերոսներ դառնալ , նրան արդեն շատ չեն գրավում խաղալիք կենդանիներն ու տիկնիկները , որոնք շատ կարևոր էին, երբ երեխան ռեժիսոր էր: Այժմ ինքը է այդ հերոսը: Այս խաղում է , որ ակտիվորեն զարգանում է երեխայի երևակայությունը , կարողությունը , ինքնությունը պարզելու ունակությունը:Իհարկե, այս բոլորը միանգամից չի լինում, սակայն ծնվում ու զարգանում են հենց դերախաղերով: Հինգ տարեկանում երեխան դուրս է գալիս իր դիրքորոշումից , երբ ոչ միայն ***Ես***-ն է կենտրոնանում , այլև շրջապատող մարդիկ՝ ընտանիքը, ընկերները, ներառյալ ընդհանուր կանոններն ու արժեքների որդեգրումը:

Դաստիարակի դերը — սովորեցնել կերպարի մեջ մտնել, ցույց տալ տվյալ կերպարի ձայնային կողմը , շարժուձևը, պատմել այդ կերպարի մասին:

Այն պետք է լինի անվնաս, մաքուր, գրավիչ, ոչ այնքան բազմազան և ներառի բոլոր այն պայմաններն ու համապատասխան տարածությունը, որը հնարավորություն կտա երեխային՝ պատկերացնելու, հորինելու և ստեղծագործելու: Զարգացնող միջավայրի բաղկացուցիչ մասն է՝ այսպես կոչված «կախարդա կան արկղիկը»: Ցանկալի է, որ այն լինի ոչ միայն մանկապարտեզում, այլև յուրաքանչյուր ընտանիքում: Այնտեղ կպահվեն զանազան հագուստներ, պարագաներ՝ երեխայի թատերական գործունեությունը կազմակերպելու համար: Նա ազատ կարող է

վերցնել իրեն անհրաժեշտ առարկան, որը կարճ ժամա- նակում հնարավոր է

վերածել կոստյումի կամ զարդի: Օրինակ, փայտի կտորը հնարավոր է դարձնել և՛ փերիի կախարդական փայտիկ, և թագավորական գավազան, և անվախ ասպետի զենք, և՛ դիրիժորական փայտիկ: Գունագեղ ձևով և նախշերով կտորները մանկական երևակայության՝ շնորհիվ հեշտությամբ վերածվում են փողկապի, վզպատի /շարֆ/, տարբեր գլխարկների՝ հրշեջի, ոստիկանի, ժամանակակից գլխարկի և այլն:

Տվեք երեխային ինքնուրույն գործելու հնարավորություն, և նա իր հավաքածուից կգտնի այն, ինչը նրան կօգնի մտնել դերի մեջ:

Տիկնիկային թատրոնի արվեստի ցուցադրումն սկսվել է մատնային տիկնիկային թատրոնով: Դա ամենապարզն ու հեշտն է, երեխաների համար ամենահասանելին: Այդպես է կոչվում, որովհետև գործողությունը տեղի է ունենում մատիկնների միջոցով : Ստորև կներկայանցնեմ մատնային թատրոնիմ մի պարապմունք:

Գլուխ 2

Տիկնիկային թատրոնի դերը գեղարվեստական ստեղծագործության մեջ

Տեսակը — Գեղարվեստական գրականություն տիկնիկային թատրոն(մատնային)
Պատմում, Ինտեգրված

Թեման — Ընկերասիրություն
Խումբ – կրտսեր 2-րդ
Տևողությունը- 15-20 րոպե
Նպատակը - Ամրապնդել երեխաների գիտելիքները՝ ռուսական ժողովրդական «Թաթմանը» հեքիաթի և հեքիաթի հերոսների մասին: Սովորեցնել տրամաբանված հերթականությամբ, արտահայտիչ մատնային թատրոնի ուղեկցությամբ պատմել հեքիաթը: Զարգացնել դերային խաղերի միջոցով համագործակցային կարողություններ և հմտություններ: Խթանել , զարգացնել երեխաների պարզ իրադրություններում 2-3 նախադասությամբ տեղեկություն ստանալու և հաղորդելու զրույցին մասնակցելու կարողություններ՝ հնարավորություն տալ նրանց մտնել երևակայական իրադրության մեջ և խաղալ իրենց և այլոց դերերը: Բառապաշարը: հարստացնել ածականներով, դաստիարակել ընկերասիրություն, ապրումակցում երեխաների մեջ սերմանել զգուշություն և անվտանգություն պահպանելու կարողություն: Ն/պ աշխատանք սովորեցնել մատիկներով խաղալու կարողություն, զրույց՝ ընկերասիրություն, հեքիաթի պատմում, մուլտֆիլմի դիտում:

Անհրաժեշտ նյութեր — հեքիաթի կերպարներով՝ մատիկներ, անտառային տեսարան,
թաթման, խմոր, սալիկներ, ձայնագրություն, անտառային տեսարան(ծառեր, տերևներ, կենդանիներ, թռչուններ, տնակներ)մեծ խաղացող և երգող նապաստակ

Պարապմունքի ընթացքը – Դաստիարակը անակնկալ հայտնվում է խմբասենյակում, որտեղ երեխաներն են
Դաստիարակ — Երեխաներ, այսօր, երբ ես գալիս էի մանկապարտեզ, բակում ձյուն

Էր գալիս: Ձյո՞ւն էր գալիս երեխաներ:
- Այո
-Ոչ
Տարբեր պատասխաններ:
Դաստիարակ - Եկեք մոտենանք պատուհանին և տեսնենք, թե ինչ եղանակ է:
Մոտենալով պատուհանին տեսնում են անակնկալ, որն ուղարկել էր նապաստակը:
Երեխաների հետ մոտենում են պատուհանին, նայում պատուհանից դուրս, այդ պահին նկատում են պատուհանի վրա դրված նվերի տուփ:
Դաստիարակ- Վայ այս ինչ է , եկեք բացենք և տեսնենք թե ինչ կա այստեղ Նամակ է ,տեսնես ով է այն ուղարկել: Բացում է նամակը և տեսնում է , որ գրել է նապաստակը
Դաստիարակ –Տեսնեք ինչ է գրել մեզ նապաստակը:

Նապաստակ — Բարև Ձեզ սիրելի երեխաներ: Ձեզ գրում է Ձեր ընկեր նապաստակը:Երեկ երբ մենք միասին խաղում էինք , դուք ինձ խնձորներ հյուրասիրեցիք, իսկ ես ձեզ շնորհակալություն չէի հայտնել և որոշեցի նվերներ ուղարկել:
Դաստիարակ — Տեսնենք ի՞նչ է ուղարկել նապաստակը:Բացում է տուփը:
Դաստիարակ- Թաթման, մատիկներ: Երեխաներ քանի որ նապաստակը գիտի, որ դուք շատ եք սիրում խաղալ դերային խաղեր, ձեզ համար ուղարկել է մատիկներ, բայց այս մատիկները ոչ թե սովորական են այլ կախարդական: Եկեք տեսնենք ինչ մատիկներ են:
Դաստիարակ ցույց է տալիս երեխաները անվանում են:
Շնիկ
Գայլ
Գորտ
Աղվեր
Նապաստակ
Խոզուկ
-Ի՞նչ եք կարծում, ո՞ր հեքիաթից է:
-Երեխաներ- «Թաթմանը»:
-Ցանկանո՞ւմ եք խաղալ մատիկներով և դերային խաղի միջոցով պատմել հեքիաթը:
Դաստիարակ- Բայց մինչ այդ եկեք խաղանք մեկ այլ դերային խաղ: Խաղը կոչվում է

«Նմանակիր կենդանուն » երեխաները լսելով երաժշտությունը դառնում են հապատասխան կենդանին և նմանակում նրանց: Երեխաները անմիջապես մտնում են դերի մեջ: Խաղի ավարտին երեխաների բաժանվում են մատիկներ և սկսում են հաջորդ խաղը՝ «Մատնային թատրոն»: Դաստիարակը պատմում է հեքիաթը կերպարները մեկ մեկ մոտենում են և տեղավորվում թաթմանի մեջ: Հանկարծ անտառով շրջելիս պապիկի շնիկը գտնում է թաթմանըև հաչալով մոտենում թաթմանին: Լսելով շնիկի ձայնը բոլոր կենդանիները փախչում են անտառ: Խաղն ավարտվում է:

Դաստիարակ — Ձեզ դուր եկա՞վ խաղը: Ինչ սովորեցրեց ձեզ հեքիաթը:

Երեխաները ամփոփում են և նկարագրում ,որ չնայած թաթման փոքր էր տեղ չկար, բայց իրենք բոլոր կենդանիներն էլ տեղավորվեցին և չմնացին դրսում

Խաղի վերջում անականկալ հայտնվում է նապաստակը և պարում երեխաների համար:

Եզրակացություն

Այպիսով՝ կատարելով հետազոտությունը եկա այն եզրակացության,որ գրական նյութը դարձնելով թատրոն բեմականացում, հնարավոր դարձավ երեխաների մոտ զարգացնել կապակցված խոսքը ,զարգացնել երեխաների տեսողական և լսողական ուշադրությունը, հիշողությունը, ստեղծագործական երևակայությունը աշխատասիրությունը, հետևողականությունը: Տիկնիկային թատրոնի միջոցով հնարավոր եղավ երեխաներին սովորեցնել, գնահատել ընկերների գործունեությունը, միմիանց հարգելու ձեռք մեկնելու կարողությունը: Մատնային խաղի միջոցով ես հասա իմ նպատակին , քանի որ զարգացավ երեխաների խոսքը, միտքը, երևակայությունը, երաժշտական ճաշակ ձևավորվեց: Երեխաները կարողացան ազատ հաղորդակցվել միմյանց հետ, մտան երևակայական իրադրության մեջ ճիշտ կատարեցին իրենց դերերը խաղային և խաղի միջոցով մատուցեցին նյութը:

Գրականության Ցանկ

1. Մանակապրտեզի կրտսեր 2-րդ խմբի կրթական համալիր ծրագիր (3+)
2. «Նախաշավիղ» - հեղինակ՝ Ի. Խանամիրյան
3. Լալա Սմբատյան-«Խաղերի և խաղ զվարճալիքների կազմակերպումը
4. Ա.Վ. Պետրովսկի «Տարիքային և մանկավարժական հոգեբանություն»:
5. https://melkie.net/zanyatiya-s-detmi/igrovye-tehnologii/syuzhetno-rolevyie-igryi-v-detskom-sadu.html
6. https://doshvozrast.ru/igra/igrarolevaya19.htm
7. Родителям о детях, Москва, издательство «Знание», 1994 г.
8. Развитие социальных эмоций у детей дошкольного возраста. Под ред. А.В. Запорожца и Я.З. Неверович, М., 1986.
9. Н. М. Аникеева, Воспитание игрой, М., «Просвещение», 1987
10. Фулько И.Ф., Социально-нравственное воспитание детей 5-7 лет, М., 2004.
11. Жуковская Р. И., Игра и ее педагогическое значение, Москва, 1975г.